ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. /+374281/ 2 25 22**

«_____» _____2020թ. **N _____**

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ
ԱՂՈՒՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Հովհաննիսյան

Ի պատասխան ՀՀ Վայոց ձորի մարզպետին 2020 թվականի հուլիսի 27-ին հասցեագրված (մտից փաստաթուղթ՝ 5420, ամսաթիվ՝ 27.07.2020թ.) Ձեր հարցման՝ ներկայացնում ենք, որ կորոնավիրուսի համավարակով պայմանավորված արտագնա աշխատանքի չմեկնած քաղաքացիների հավաքագրման նպատակով մարզպետարանի կայքում՝ http://vdzor.mtad.am/news/item/2020/05/07/3003/ հղումով տեղադրված 2020 թվականի մայիսի 7-ի հայտարարությանը էլեկտրոնային եղանակով ոչ ոք չի արձագանքել:

2020 թվականի ընթացքում արտագնա աշխատանքի չմեկնած անձանցից 5 դիմում ենք ստացել թղթային տարբերակով՝ աշխատանքի տեղավորման խնդրանքով: Դիմումատուներին ուղղորդել ենք մարզի զբաղվածության տարածքային կենտրոններ՝ ծանոթանալու առկա թափուր աշխատատեղերին, ինչպես նաև տեղեկացրել ենք վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման ծրագրի մասին:

Ներկայումս մարզում կապիտալ շինարարության ոլորտում ընթանում են «Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր շենքի կառուցման աշխատանքները, որտեղ ներգրավվել են մեր կողմից ուղղորդված վերոնշյալ հինգ անձանցից երկուսը:

Նաև տեղեկացնում ենք, որ արտագնա աշխատանքի չմեկնած անձանց թվաքանակի, աշխատանքային զբաղվածության կամ աշխատավարձի վերաբերյալ տեղեկատվություն մարզպետարանում չի հավաքագրվում:

Недействительная подпись

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Իրավաբանական բաժին
Ն. Մաղաքյան, Հեռ. (0281) 2 55 95